

**ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒՄ՝ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆԸ
ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐԲՈՂԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ԵՒ
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բանալի բառեր՝ քննական բնագիր, ձեռագիր, հանգ, ուրիշ, ոճական արտահայտչամիջոցներ, նորակազմություններ:

Սուրբ Աստվածածնի ննջելու և երկինք փոխադրվելու հիշատակը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ հիմնական՝ տաղավար տոներից է, որը նշվում է օգոստոսի 15-ին կամ մոտակա կիրակի օրը՝ «Վերափոխումն» կամ «Ննջումն Սուրբ Կույսի» անվամբ: Սա Աստվածածնին նվիրված տոներից հնագույնն է, հիշատակվում է Երուսաղեմյան Ճաշոցում՝ չորրորդ դարից սկսած¹: Սուրբ Կույսի վերափոխման պատմությունը մեզ հասել է Սրբազան Ավանդության² շնորհիվ, քանի որ Նոր Կտակարանում ոչ մի ակնարկ չկա այդ մասին. սկզբնական շրջանում տերունական բոլոր պատմություններն ու պատգամները բերանացի էին փոխանցվում սերնդեսերունդ, ոչինչ չէին գրում, քանի որ վստահ էին, որ Քրիստոսի երկրորդ գալուստը շատ մոտ է:

Աստվածածնի վերափոխման պատմությունը բազմաթիվ ճառերի, ներբողների և շարականների նյութ է դարձել թե՛ այլազգի և թե՛ հայ հեղինակների համար, սակայն մենք կանդորադառնանք դրանցից միայն մեկին՝ հայ միջնադարյան գրականության ականավոր ներկայացուցիչ Ներսես Լամբրոնացու (1153-1198 թթ.) Աստվածածնի վերափոխմանը նվիրված ներբողին: Հստ

¹ Վ. Իգնատիսյան, *Աստվածամայրը*, Երևան, 2002, էջ 26:

² Գրավոր կամ բանավոր ավանդված աստվածային, մարգարեական, առաքելական պատվիրան կամ պատմություն, ծես և օրենք, որի վրա հաստատված է Ընդհանրական եկեղեցին, այն Աստծո գրավոր հայտնության՝ Ս. Գրքի լրացուցիչ մասն է (տե՛ս Քրիստոսյան Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 123-124):

Ղևոնդ Ալիշանի՝ Կամբրոնացին այս ներբողը հավանաբար գրել է քահանա եղած ժամանակ³ 1171-1173 թվականների ընթացքում, երբ ընդամենը 18-20 տարեկան էր:

Աստուածամոր վերափոխման ներբողի բնագիրը հրատարակել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Համազասպ Ոսկյանը, որը, չունենալով որևէ հին ձեռագիր, օգտվել է իր ձեռքի տակ եղած Վիենն. 610 ձեռագրից (1788 թ.) համեմատելով այն Վիենն. 966 Ճառքնատիրի հետ, որ պարունակում է միայն ներբողի վերջին մասը⁴: Ոսկյանը բնագիրը հրատարակել է արձակ, քանի որ երկար ժամանակ Կամբրոնացու՝ Աստվածածնի վերափոխմանը, ինչպես նաև Քրիստոսի Համբարձմանը և Սուրբ Հոգու Գալստյանը նվիրված ներբողները ավանդաբար համարվել են ճառեր և հրատարակվել արձակ: Սակայն դրանք աներկբա ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություններ են, որտեղ վկայված են ներբողյանի ժանրին բնորոշ գլխավոր առանձնահատկությունները՝ ունեն նախաբան, հիմնական մաս և վերջաբան⁵: Այս մասին Գրիգոր Հակոբյանը գրում է. «Ճիշտ չի լինի Կամբրոնացու ներբողները «ճառ» համարել և դնել նրա արձակ գործերի մեջ, ինչպես արվել է մինչև հիմա: Այդ ներբողները յուրատեսակ շափածո գործեր են՝ թեև շատ հաճախ առանց հանգերի ու տողատման, ինչպես մեր բազմաթիվ շարականներն ու տաղերը»⁶: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը՝ քննական հրատարակություն պատրաստելիս մենք տողատեղ ենք Աստվածամոր Վերափոխմանը նվիրված ներբողի բնագիրը⁷, քանի որ ամենուր ակնհայտորեն առկա է ուրիշ, բացի այդ՝ կան հանգավորված մեծ ու փոքր հատվածներ, օրինակ՝

Ի սմանէ ծանեաք զհոլուն՝ հող,
Զբանն՝ մարմին, զլոյսն՝ ի խաւար,
ԶԱստուած՝ մարդ, զճոխն՝ աղքատ,

³ Ղ. Ալիշան, Սիսուան, Վեներտիկ, 1885, էջ 97:

⁴ Հ. Ոսկեան, «Ներսէսի Կամբրոնացոյ Ներբողեան ի Վերափոխումն Աստուածածնի», ՀԱ, ԼԹ. տարի 1925, էջ 355:

⁵ Ներբողյանի մասին առավել մանրամասն տես՝ Գիւրգ Պիտոյից, աշխ. Գ. Մուրադյանի, Երևան 1993, էջ 95-124, Ա. Ղազիմյան, «Ներբողը հայ հին գրականության մեջ», Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երևան 1984, էջ 127-179:

⁶ Գ. Հակոբյան, Ներսես Կամբրոնացի, Երևան, 1971, էջ 15:

⁷ Ա. Ավետիսյան, «Ներսէս Կամբրոնացու ներբողը՝ նուիրուած Աստուածամօր Վերափոխմանը», Էջմիածին, թիվ Բ., էջ 11-29, թիվ Թ., էջ 42-61, Ս. Էջմիածին, 2018 (այսուհետ շարադրանքում վկայակոչվելու է Բ, Թ և էջը):

Ձանկարաւոն՝ քաղցեալ, զանտանելին՝ քանակեալ,
 Ձանհասն՝ շարշարեալ, զհզարն՝ տկար,
 Ձանմահն՝ մեռեալ վասն մերոյ փրկութեան... (Ը., էջ 15)

Յորժամ յաճախէր զնշանս զանազան
 Եւ հացիւ յագեցոյց նա զամենեսեան,
 Մայրն կախեալ էր զյուսոյն խոստման,
 Թէ ահա ընդունի զթագն դաւթեան:
 Իսկ ապա տեսեալ այսր փոխան
 Զշարշարանս Որդոյն զանազան՝
 Յուսակտուր կայր ի յերերման,
 Եւ գովէն եհար զսիրտն սրոյ նման... (Ը., էջ 27)

Բնագրի պատրաստման համար հիմք ենք ընդունել ներբողյանի ցայժմ հայտնի հնագույն օրինակը՝ Հալեպի Քառասուն մանկունք եկեղեցու մատենագարանի Հ^մ 141 ձեռագիրը, որի գաղափար օրինակն արտագրված է Ներսես Լամբրոնացու ինքնագրից⁸ (այս մասին կարդում ենք Հ^մ 141 ձեռագրի հիշատակարանում (ԺԳ. դարի սկիզբ), որտեղ գրիչը՝ Գրիգոր Ակներցին, մասնավորաբար նշում է. «Նուզեալ գտի գրեալ աստուածընկալ ձեռաց տեսոն Ներսէսի Տարսոն եպիսկոպոսի տիեզերալոյս վարդապետի...⁹»): Այն համեմատել ենք ՄՄ Հ^մ 3770 (1304 թ.), ՄՄ Հ^մ 779 (1643 թ.), ՄՄ Հ^մ 4574 (1824 թ.), ՄՄ Հ^մ 2682 (1823-1825 թթ.) ձեռագրերի և Համագասպ Ոսկյանի հրատարակած բնագրի հետ:

Համբրոնացին այս ներբողն արտասանել է Աստվածամոր Վերափոխման տոնին՝ Սկևռա վանքում, սակայն ներբողում միայն Վերափոխման մասին չէ, որ խոսվում է. Համբրոնացին պատկերում է Աստվածածնի ամբողջ կյանքը՝ ավելի մանրամասն անդրադառնալով վերափոխման դեպքին: Գեղարվեստական զանազան ոճավորումներով մանրակրկիտ ներկայացված են Մարիամի ծնունդը, Հիսուսի ծննդյան ավետումը Մարիամին՝ Գաբրիել հրեշտակապետի կողմից, Քրիստոսի ծնունդը, մոգերի գալուստը, փախուստը Եգիպտոս, տաճար գալը, Սիմեոն ծերունուն տեսնելը, Հիսուսի հրաշագործությունները, խա-

⁸ Ն. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 208:

⁹ Հալեպի ձեռ. Հ^մ 141, էջ 156:

չելությունը, թաղումը, հարությունը, համբարձումը և, ի վերջո՝ Աստվածամոր վերափոխումը:

Թեև, ինչպես արդեն նշեցինք, Տիրամոր ննջման և վերափոխման մասին Սուրբ Գրքում որևէ հիշատակություն չկա, այնուամենայնիվ, Ներսես Լամբրոնացու ներբողի առաջին և հիմնական աղբյուրը Աստվածաշունչն է. հեղինակը բազմաթիվ բառացի և ոչ բառացի մեջբերումներ է անում աստվածաշնչյան տարբեր գրքերից, ինչպես՝ Ծննդոց, Առակաց, Սաղմոսաց գրքերից, Դանիելի և Եսայու մարգարեություններից, Երգ երգոցից, Ավետարաններից և թղթերից: Հինկտակարանյան մեջբերումներից առավել հաճախ հանդիպում են Երգ երգոցից հատվածներ, ուստի դրանք արժանի են առանձնակի ուշադրության: Երգ երգոցի մեկնողական գրականության մեջ առավել տարածված է փեսա-Քրիստոս և հարս-եկեղեցի զուգահեռը, սակայն այս գրքից արված մեջբերումներում Ներսես Լամբրոնացին որպես փեսա ներկայացնում է Քրիստոսին, իսկ հարսին վերաբերող բոլոր ձևակերպումները վերագրում է Աստվածամորը. օրինակ՝

Ձայն եղբորորդույ իմոյ.

Ահալասիկ սա եկն վազելով ի վերայ լերանց՝

Խայտալով ի վերայ բլրոց (Երգ Բ. 8):

Ձայն որդեկի իմոյ.

Ահալասիկ սա եկն վազելով ի վերայ լերանց՝

Խայտալով ի վերայ բլրոց (Թ., էջ 55):

Նշենք, որ Հայ եկեղեցու տոնացույցում Աստվածամորը նվիրված բոլոր տոների ճաշու ընթերցվածներում առանցքային տեղ է գրավում Երգ երգոց գիրքը, որտեղ ևս առկա է հարս-եկեղեցի-Աստվածամայր զուգահեռը, ուստի այս պարագայում Լամբրոնացին հետևել է Հայ առաքելական եկեղեցու ծիսական ավանդության մեջ հայտնի մոտեցմանը: Հարկ է նշել, որ այս երևույթը բնորոշ է նաև այլ եկեղեցական ավանդություններին, որպես օրինակ ներկայացնենք հին անգլերենով պահպանված անանուն հեղինակի՝ Աստվածամոր Վերափոխմանը նվիրված միջնադարյան մի բանաստեղծություն, որն, ըստ աշխատասիրողի, հավանաբար թարգմանված է լատիներեն ավելի հին աղբյուրից¹⁰:

¹⁰ **Karen Saupe**, *Middle English Marian Lyrics*, Kalamazoo, Michigan, 1997, N 49. (<https://d.lib.rochester.edu/teams/text/saupe-middle-english-marian-lyrics-assumption-and-mary-as-queen-of-heaven#one>, <https://thomaslmcDonald.wordpress.com/tag/assumption/>, un 30.01.2019).

Crist sayde to hur:

*“Com, my swete, com, my flour,
Com, my culver, myn owne boure,
Com, my modyr, now wyth me:
For hevyn qwene I make thee.”*

Then the body sat up, and lowted to
Crist, and sayde:

*“My swete sonne, with al my love
I com wyth thee to thyn above;
Wher thou art now, let me be,
For al my love ys layde on thee.”*

Christ visited the body of Mary, and
said:

*“Come my sweet, come my flower,
Come my dove, come my bower,
Come, my mother, now with me,
For heaven’s Queen I make thee.”*

Then the body sat up, bowed to Christ,
and said:

*“My sweet son, with all my love
I come with you to heaven above:
Where you are now, let me be
For all my love I lay on thee.”*

Քրիստոսն այցի եկավ Մարիամի մարմինն և ասաց.

*«Արի՛ անու՛շ իմ, ծաղի՛կ իմ,
Աղավնի՛ իմ, օթևան՛ իմ,
Մա՛յր իմ, արդ, արի՛ ինձ հետ,
Երկնային թագուհի կդարձնեմ ես քեզ»:*

Հետո մարմինը վեր կացավ, խոնարհվեց Քրիստոսին ու ասաց.

*«Իմ անու՛շ որդի, իմ ամբողջ սիրով
Գալիս եմ քեզ հետ դեպ երկինք վերին,
Որտեղ որ դու ես հիմա, թող ես էլ լինեմ,
Իմ ողջ սիրով ես քոնն եմ» (Թրգմ. Ա.Ա.):*

Այս բանաստեղծությունը ներսես Լամբրոնացու ներբողի և Երգ երգոցի համապատասխան հատվածների հետ համեմատելիս անհնար է չնկատել

Թեմատիկ ընդհանրությունները, ակնհայտ է, որ և՛ անգլիացի բանաստեղծի, և՛ Ներսես Լամբրոնացու համար իբրև աղբյուր ծառայել է հենց նրա երգոցը.

«Արի՛, ե՛կ, Մա՛յր իմ, գեղեցի՛կ իմ, աղանի՛ իմ,
 Ե՛կ ի գաւառն հայրենի,
 Հանգի՛ր ի չքնաղակերտն խորանս»:
 «Արդ, ո՛վ դասք առաքելոց, աւրիորդք իմոյս հարսնութեան,
 Մուծէ՛ք զիս ի տուն գինւոյ,
 Կարգեցէ՛ք ի վերայ իմ գսէրն,
 Հաստատեցէ՛ք զիս իւղովք,
 Հաւաքեցէ՛ք յիս խնձորս,
 Վասն զի խանդակաթեմ ես սիրով Միածնիս իմոյ,
 Ահեակ նորա ի վերայ գլխոյ իմոյ
 Եւ աջ նորա պատեսցի զինեւ.
 Եւ առեալ զիս, թռուցեալ ամբարձցի յերկինս» (Թ., էջ 56):

Պատասխանի տայ եղբորորդին իմ ինձ՝ եւ ասէ.
 Արի՛, ե՛կ, մերձաւո՛ր իմ, գեղեցի՛կ իմ, աղանի՛ իմ...
 Յօրիորդսն հարսնն ասէ.
 Մուծէ՛ք զիս ի տուն գինւոյ,
 Կարգեցէ՛ք ի վերայ իմ գսէր,
 հաստատեցէ՛ք զիս իւղով.
 կուտեցէ՛ք յիս խնձոր,
 զի խանդակաթ եմ ես սիրով...
 Զախ նորա ընդ գլխով իմով, եւ աջ նորա պատեսցէ զինեւ... (Երգ Բ. 4-10):

Վերափոխման ներբողի կարևոր աղբյուրներից են նաև պարականոն կամ ոչ կանոնական գրքերը, որոնցից որպես առավել նշանակալի աղբյուրներ կարելի է առանձնացնել Մովսես Խորենացու անվամբ պահպանված «Պատասխանի թղթոյն Սահակայ»¹¹, որի մեջ անդրադարձ կա նաև Աստվածածնի Վերափոխմանը, Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս աստուածային

¹¹ Մատենագրութիւնք Մովսէսի Խորենացոյ, Վենետիկ, 1843, էջ 283-296:

անուանց»¹² և «Պատասխանի թղթոյն Տրտոսի... Յաղագս ննջման Սրբոյ Աստուածածնի և միշտ կուսին Մարիամու»¹³ երկերը¹⁴: Վկայակոչենք մի օրինակ, որից ակնհայտ երևում է, որ Համբրոնացին ձեռքի տակ ունեցել է Դիոնիսիոսի վերոնշյալ երկերը, ամենայն հավանականությամբ՝ հայերեն թարգմանությամբ.

Մինչդեռ աստուածընկալ քահանայապետքն
Շուրջ կային զաստուածակիր մարմնովն,
Քանզի միահամուռ դասք առաքելոցն
Անդր եկին գումարեալ որպէս ասացաւ.
Անդ էր աստուածեղբայրն Յակոբոս
Եւ անաւթն ընտրութեան Պաւղոս,
Եւ մեծիմաստն Յոնթէոս,
Որպէս պատմէ աշակերտ նոցին Դիոնէսիոս...
Աստուածաբանն Յոնթէոս ի մէջ կացեալ
Եւ զսքանչելի խորհուրդս յայտնեալ առ յամենեցունց, որք լուանն,
Աստուածընկալ եւ աստուածային արհնաբանող կոչեցաւ.
Որք ապա եւս հաստատեալ ի պատիւ Իսկուհւոյն... (Թ., էջ 54):

¹² *The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite*. [Text in Armenian]. Edt.: **R. W. Thomson**. Corpus Scriptorum Christianorum Orientalium Vol. 488 Scriptorum Armeniaci Tomus 17. Lovanii, 1987, pp. 128-223.

¹³ ՄՄ 1309, ք. 250բ-251բ:

¹⁴ Վերափոխման ներքոյի պարականոն աղբյուրներից են նաև «**Մարիամի ննջումը**» (Ե. դարից ոչ ուշ, ըստ Ֆեթթերի այս ստեղծագործության հայկական տարբերակը մեզ է հասել Զ. դարից (տե՛ս **Vetter P.** *Die armenische Dormitio Mariae*. Եզվ. աշխ. ծան. 22, ThQ 84, 1902, էջ 325), ասորական եկեղեցու հայրերից **Հակոբ Սրնեցու** «Ներքողեան ասացեալ ի ննջումն սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամայ» (*Գիրք եւ ճառ հոգեշահ*, Կ. Պոլիս, 1722, էջ 427-441) և «Յաւուր մեծի խաչելութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և յաւազակն, որ հրափրեցաւ ի դրախտն և ի սերովբէն, որ պահէր զհանապարհ ծառոյն կենաց» (*Գիրք և ճառ հոգեշահ*, էջ 170-203, ըստ Գարեգին Զարբանալյանի՝ այն ասորերենից թարգմանվել է «հրամանաւ տեառն Գրիգորիոսի Հայոց կաթողիկոսի, ի ձեռն քահանայի ուժեմն Իսահակ անուն կոչեցեալ, ասորի ազգէ, անարուեստ գոլով մերոյ դպրութեանս, շաղփաղի և կոկորդախօս լեզուաւ, և ստուգեցաւ ի սուրբ և յանբիժ եւ ի մեծ արհիեպիսկոպոսէ ի տեառն Նէրսիսէ հռետոր իմաստասիրէ (Ներսես Շնորհալի – ծնթ. Ա.Ա.)», տե՛ս **Գ. Զարբանալյան**, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեանց* (դար Դ.-ԺԳ.), Վենետիկ, 1889, էջ 573) ստեղծագործություններից, ինչպես նաև **Եփրեմ Ասորու** «*Մեկնութիւն Աւետարանի Համաբարբառ*» (Տատիանոս Ասորու Դիատեսարոնի) մեկնությունից (տե՛ս **Սրբոյն Եփրեմի մատենագրութիւն**, հ. Բ., Վենետիկ, 1836, էջ 6-260): Պարականոն աղբյուրների շարքին է պատկանում նաև Տիրամոր ննջմանը վերաբերող մի հառ, որ վերագրվում է **Սբ. Հովհանն Ոսկեբերանին** (**M. van Esbroeck**, *Oriens Christianus*, 1990, էջ 209-220): Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Թ. Տասնապետեան**, *Աստուածածին*. Նոր յօդուածներու ժողովածու, Անթիլիաս, 2008, էջ 79-153:

Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկում կարդում ենք՝ «...յորժամ մեք և նա, զոր գիտես իսկ, և բազումք ի սրբազան մերոց եղբարցն, ի տեսութեան կենդանապետականի և աստուածընկալ մարմնոյն եկաք միահամուռ, անդ էր և աստուածեղբայրն Յակոբոս, և Պետրոս գլխաւորն, և երիցագոյն աստուածաբանիցն ծայրութիւն... նա՛ քան զամենայն սրբազանսն խորհրդագգածս հօրագոյն էր յետ աստուածաբանիցն, բոլորովիմբ սարսելով, բոլորովիմբ զարմացմամբ յինքեան, և առ օրհնաբանութիւնսն զկցորդութիւն կրելով, և առ ի յամենեցունց, որք լսէինն և տեսանէին, և որք գիտէինն, և որք ոչն գիտէինն, աստուածընկալ և աստուածայնին օրհնաբանօղ կոչիւր...»¹⁵:

Անդրադառնալով Աստվածածնի վերափոխման ներբողի ոճական արտահայտչամիջոցներին՝ համոզվում ենք, որ թեև Լամբրոնացին տասնութ-քսան տարեկան երիտասարդ էր, սակայն ուներ լեզվական բարձր ճաշակ և զարմանալի հմտությամբ կարողացել է ճիշտ շփով և ճիշտ տեղում կիրառել զանազան պատկերավորման միջոցներ՝ գերծ մնալով անհարկի վերամբարձ շարադրանքից:

Ներբողը գրելիս Լամբրոնացին պարզապես չի վերաշարադրել պարականոն աղբյուրների նյութը, այլ մի շարք արտահայտչամիջոցների կիրառմամբ յուրահատուկ նրբերանգային շեշտադրումներ է կատարել: Հեղինակը ներբողում առատորեն կիրառել է մակդիրներ, որոնց միջոցով տրվում են առարկայի կամ որևէ երևույթի գեղարվեստական, պատկերավոր բնութագրությունները, ինչպես՝ «սրտաբորբոք գութ» (Լ., էջ 23), «ամենակար խնամք» (Թ., էջ 53), «բաժակ անմահութեան», «պտուղ օրհնութեան», «կենաց սերմն» (Լ., էջ 25) և այլն:

Նյութը հարուստ է նաև փոխաբերություններով: Ոճի խորագիտակ ուսումնասիրողներից Սենեքերիմ Մելքոնյանը գրում է, որ գեղարվեստական մտածողության յուրահատկությունը բառային մակարդակում ոչ մի այլ միջոցով այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն չի կարող ունենալ, որքան փոխաբերության կիրառությամբ, մանավանդ որ, բառի նման իմաստով գործածությունը հիմք է դառնում խոսքի պատկերավորության և արտահայտչականության շատ այլ միջոցների համար և զանազան ձևերով սերտորեն

¹⁵ The Armenian Version of the Works attributed to Dionysius the Areopagite. [Text in Armenian]. Edt.: **R. W. Thomson**. Corpus Scriptorum Christianorum Orientalium Vol. 488 Scriptorum Armeniaci Tomus 17. Lovanii, 1987, pp.151-152.

առնչվում դրանց հետ¹⁶: Բերենք փոխաբերության բնութագրական օրինակներ՝ «Եւ այժմ ամենայն երախտագործութիւն քո ունայնացաւ...» (Թ., էջ 42), «Մեծութիւն նորա այսպիսի բարձրացաւ...» (Լ., էջ 16), «Կուսութեամբ ծնայ և արդարութեամբ սնուցի» (Լ., էջ 28):

Ներբողի ոճը հարստացնում են բազմաթիվ համեմատությունները, ինչպես՝ «Եւ գութն եհար զսիրտն սրոյ նման» (Լ., էջ 27), «Եւ դիր զիս իբրև զկնիք ի վերայ սրտի քո / Եւ իբրև զմատանի ի վերայ բազկի քո» (Թ., էջ 56), «Ով է սա, որ ելանէ յանապատէ / Իբրև զստեղն խնկոյ ծխեալ» (Թ., էջ 53):

Բառային կրկնությունների շնորհիվ կամբրոնացին ստեղծել է յուրօրինակ ներքին բանաստեղծական հանգավորում, ինչպես՝ «Սա մխիթարեսցէ զքեզ, մինչեւ ամից ի հայրենիսն / Սա պաշտեսցէ զքեզ, մինչեւ կոչեսցիս ի յերկինս / Սա եղիցի քեզ որդի, մինչեւ ի փոխելն զմայրդ իմ առ իս» (Լ., էջ 28):

Ներբողում ներառված ճառերը, աղոթքներն ու երկխոսությունները, որոնցով ներսես կամբրոնացին ճոխացրել է պարականոն աղբյուրների հատվածական վկայությունները, ըստ ամենայնի, ինքնուրույն ստեղծագործություններ են. այստեղ հեղինակը կիրառել է հին պատմիչներին բնորոշ հերոսներին խոսքեր վերագրելու հնարքը:

Ներբողն ինքնին, լինելով ճոխ, պերճ ու զարդարուն ոճի ստեղծագործություն, հեղինակից պահանջում է նորակերտ բառերի կիրառություն: Այս տեսանկյունից դատելով՝ կարող ենք ասել, որ կամբրոնացու լեզուն աչքի է ընկնում իր բառապաշարի յուրօրինակությամբ, նա ոչ միայն մեծատաղանդ, այլև ինքնատիպ բառաստեղծ է: Միայն Վերափոխման ներբողում կիրառված է շորս նորակազմ բառ, որոնցից երկուսն առհասարակ վկայված չեն բառարաններում, իսկ մյուս երկուսի դեպքում էլ օրինակները բերվում են միայն կամբրոնացուց, այսպես՝

1. **Թևաքող** - նձբ-ում կա միայն թևաքողեմ բայը՝ «թևով որպես քողով պատել և ծածկել զինքն առ պատկառանաց» բացատրությամբ: Այս բայը հիմնականում կիրառվում է սերովբեներին¹⁷ բնորոշելու համար, կամբրոնացին նորա-

¹⁶ Ս. Մելոնյան, *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Երևան, 1984, էջ 94:

¹⁷ «Սերովբե»-ն երբայեքն բառ է, որ նշանակում է վառվող, կիզվող: Սուրբ Գրքում այս բառը հանդիպում է միայն Եսայու մարգարեության վեցերորդ գլխում, ըստ որի՝ սերովբեներն ունեն վեց թև, որոնցից երկուսով թռչում են, իսկ մյուս երկու զույգ թևերով ծածկում են իրենց երեսներն ու ոտները (Ես. 6.2): Ըստ Սուրբ Հովհանն Ոսկեբերանի սերովբեներն այսպես են վարվում այն պատճառով, որ ի վիճակի չեն դիմանալու Տիրոջ Գահից նառագող աստվածային փառքի յույսին և, ինչպես մարդիկ են երեսները ծածկում կայծակի փայլատակման ժամանակ, այնպես էլ նրանք, մշտապես Աստծո առաջ լինելով,

կերտ «Թեաւքօղ» ածականը նույնպէս կիրառում է սերովբեների այդ հատկանիշը ընդգծելու համար՝ «Ի կառս քերովբէից Աստուածդ բազմեալ / Թեաւքօղ սերօբէիւքն սրբաբանեալ» (Լ., էջ 20):

2. **Հայրենագաւառ** – «Հայրենի»՝ «սեպհական հօր, և հարց, և նախնեաց» և «գաւառ»՝ «նահանգ, աշխարհ առանձինն, կողմն աշխարհի, մանաւանդ հայրենի երկիր» բառերից -ա- հոդակապով կազմված գոյական, որը տեքստում կիրառվում է «հայրենի երկիր» նշանակությամբ՝ «Քանզի յերեւեալ դարձուցանողին զգերութիւն մարդկան / Ի պանդուխտս վայրէ ի հայրենագաւառն վերին» (Լ., էջ 19):

3. **Ստորահեղու** – Հունաբանների ստեղծած նախածանցով կազմված այս բայի բաղադրիչներից արդեն իսկ հասկանալի է իմաստը, ըստ ՆՀԲ-ի՝ «ի վայր հեղու, ստորածորի, ստորահոսելը»: Բառարանում նշված օրինակներից պարզ է դառնում, որ Լամբրոնացին տարբեր երկերում հաճախ է կիրառել բառը. մեր ուսումնասիրության ենթակա տեքստերում բառը բնութագրում է հրեշտակների վար իջնելը՝ «Ստորահեղան գուարթունք, գումարեցան անմարմինք / Իջին սերաւբէք, խոնարհեցան քերաւբէք» (Թ., էջ 55):

4. **Սրտաբորբոք** – Դարձյալ -ա- հոդակապով ստեղծված այս ածականը ՆՀԲ-ում բացատրվում է հետևյալ նշանակությամբ՝ «բորբոքեալ սրտիւ, անձկալից, ջերմեռանդն»՝ Իւրաքանչիւր ոք ի զգայարանացն սրտաբորբոք գթով համբուրէր եւ ասէր...» (Լ., էջ 23):

Այս ինքնատիպ ներբողը բնագրային, լեզվական և աստվածաբանական ուսումնասիրության հարուստ նյութ է ընձեռում: Ամփոփելով՝ ընդգծենք, որ Աստվածածնի մահվան իրողության մասին վկայված պարականոն նյութը գտելով՝ Ներսես Լամբրոնացին հիրավի նոր պատում է ստեղծել, որն անվարան գրական և աստվածաբանական գլուխգործոց կարող ենք համարել:

ARPINE AVETISYAN

NERSES LAMBRONATS' I'S PANEGYRIC ON THE ASSUMPTION OF VIRGIN MARY

Key words: critical edition, manuscript, rhyme, rhythm, means of expression, neologisms.

Archbishop Nerses Lambronats'i is one of the outstanding medieval authors

and Fathers of the Armenian Church. He was a poet, prose writer, translator, and commentator (he wrote commentaries on Genesis, Ecclesiastes, Wisdom, he interpreted church rites, the mystery of the Liturgy etc.).

His panegyric on the Assumption of Virgin Mary was published on the basis of one manuscript (Vienna, No. 610, 1788) as a prose text, but it clearly has a rhythm and sometimes rhymes, which allowed us to break it into verses. Our critical edition of this panegyric is based on four manuscripts of Matenadaran, the oldest surviving manuscript from the Church of the Forty Martyrs in Aleppo, and the previous edition.

Lambronats'i has applied various means of expression in his panegyric: epithets, comparisons, metaphors, repetitions etc., which have created his original vivid and eloquent style.

АРПИНЕ АВЕТИСЯН

**ОДА НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ НА
ВОЗНЕСЕНИЕ ДЕВЫ МАРИИ**

Ключевые слова: критическое издание, рукопись, рифма, ритм, языковые выразительные средства, неологизмы.

Архиепископ Нерсес Ламбронаци – один из выдающихся отцов Армянской Церкви и величайших средневековых писателей. Он был поэтом, прозаиком и переводчиком, а также талантливым толкователем Священного Писания. Известны его толкования на книги Бытия, Экклезиаст, Премудрости, размышления о церковных обрядах и толкование тайны Литургии и т.д..

Его ода, посвященная Вознесению Девы Марии, была опубликована по одной поздней рукописи (Вена N 610, 1788 г.) в виде прозаического текста. Однако в ней четко заметны ритм, а местами и рифма, что позволило нам разделить ее на стихотворные строки. Нами издан критический текст этой оды, с использованием четырех рукописей Матенадарана имени Маштоца, древнейшей сохранившейся рукописи из церкви Сорока мучеников в Алеппо и текста начальной публикации.

Различные выразительные средства, использованные в оде Ламбронаци – эпитеты, сравнения, метафоры, повторения и др., обеспечивают цветистость ее своеобразного стиля.